[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
11	Դեկտեմբեր	2018 թ.		Ա	8947883638
[4] Մատակարարման ամսաթիվ					
10	Դեկտեմբեր	2018 թ.	Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X»)	հատուկ	

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	[7]	
			[8]	
			[9]	

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	5	2	7	6	2	4		
[12] Անվանումը	«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հիմնադրամ									
[13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	2	5	2	7	6	2	4	/	1
[14] Բանկային տվյալները	Արարարատ բանկ				N 1510002308480100					
[15] Գտնվելու վայրը (հասցե)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 17									
[16] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[18] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[19] Բանկային տվյալները	ՀՀՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն				N 900011000834			
[20] Գտնվելու վայրը (հասցե)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[21] Լրացուցիչ տվյալներ	Մարիաննա Ավետիսյան							
[22] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծանոթագրության բլոկում)	Միավորի գինը	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1	դատահոգեբանական փորձաքննություն (գործ 17115018)	հատ	1	32833.33	32833.33	20	6566.67	39400
Ընդամենը					32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ HARUTYUNYAN SUSANNA 7314730458

անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

11/12/2018 14:17:57

ՈՐՈՇՈՒՄ

Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

« 10 » հոկտեմբերի 2018թ. քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական Գ.Խ.Հովհաննիսյանս, քննարկելով վարույթումս քննվող **17115018** քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի սեպտեմբերի 26-ին՝ ժամը 15:10-ին՝ Երևան քաղաքի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին հաղորդում է ստացվել այն մասին, որ «ձախ թուլակողի և ձախ բազկային շրջանի կտրած-ծակած վերքեր» ախտորոշումով շտապբուժօգնության թիվ 51-րդ բրիգադը բժշկական կենտրոն բուժօգնության է տեղափոխել Երևան քաղաքի Նանսենի փողոցի 19-րդ շենքի 22 բնակարանի բնակչուհի, 19.12.1987 թվականին ծնված՝ Ռոզա Ջիվանի Սարգսյանին, որտեղ վերջինս հայտնել է, որ Նանսենի անվան այգում անծանոթ անձը իրեն դանակահարել է:

Ձեռնարկված քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքի Ֆ.Նանսենի անվան այգում Ռոզա Ջիվանի Սարգսյանին դանակով որովայնի ձախ կողային պատի կտրած-ծակած թափանցող արնահոսող վերք՝ փայծաղի վնասումով, սուր ներքին արյունահոսությամբ մարմնական վնասվածք է պատճառել Երևան քաղաքի Ջուղայի փողոցի 5-րդ շենքի 51 բնակարանի բնակիչ, 02.04.1982 թվականին ծնված՝ Արարատ Էդիկի Ղուկասյանը, ով ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին՝ ներկայացնելով առերևույթ հանցագործության գործիք դանակը:

Փաստի առթիվ 2018թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է **17115018** քրեական գործը, ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

07.10.2018թ. Ռոզա Ջիվանի Սարգսյանի առողջությանը ծանր մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով ձերբակալվել է Արարատ Էդիկի Ղուկասյանը:

Նախաքննության ընթացքում որպես կասկածյալ հարցաքննված Արարատ Էդիկի Ղուկասյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2018 թվականի հոկտեմբերի 7-ին ժամը 14 :00-ի սահմաններում ինքը, լինելով զայրացած իրենց հարևանուհիների վրա, ովքեր իրեն մշտապես վիրավորել են, դուրս է եկել տանից, զբոսնելու և ցրվելու նպատակով: Զբոսնել է Նոր Նորքի 1-ին զանգվածում գտնվող Նանսենի անվան այգում : Հասնելով նշված այգում գտնվող եկեղեցու մոտ՝ նկատել է մի աղջկա, ում ինքը նմանացրել է այն աղջիկներից մեկին, ովքեր իրեն վիրավորել են : Վերջին օրերի ընթացքում ինքն իր մոտ մշտապես դանակ է պահել, քանի որ իր համբերության բաժակը լցված է եղել ու ինքը նպատակ է ունեցել իրեն վիրավորողներից ինչ որ մեկին տեսնելու դեպքում դանակով հարվածել : Տեսնելով աղջկան, ում նմանացրել է իրեն վիրավորողներից ինչ որ մեկին՝ անմիջապես հարձակվել է նրա վրա և տաբատի հետևի հատվածից հանելով խոհանոցային դանակը երկու անգամ հարվածել է : Առաջին հարվածը դիպչել է աղջկա ձեռքին և, քանի որ, առաջին հարվածի դիպչել է աղջկա ընդամենը ձեռքին, ինքը ևս մեկ անգամ է հարվածել, այս անգամ արդեն աղջկա որովայնին : Դրանից հետո տեսնելով հավաքված մարդկանց տրամադրվածությունը, ինքը վախեցել է և ինքնակամ

ներկայացել է ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին ու հանձնվել՝ ներկայացնելով նաև կարմիր, արնանման հետքերով դանակը:

Տուժող Ռոզա Սարգսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2018 թվականի հոկտեմբերի 7-ին ինքը դուրս է եկել տանից իր թութակների համար կեր գնելու նպատակով: Տուն վերադառնալիս ժամը 14:00-ի սահմաններում որոշել է Նանսենի անվան այգում գտնվող եկեղեցու մոտակայքում մի փոքր նստել նստարանին: Նստարանին նստելուց հետո ինքը զբաղված է եղել բջջային հեռախոսի միջոցով ընկերուհուն հաղորդագրություն գրելով, ինչի ընթացքում զգացել է, որ ինչ որ մեկը արագ մոտեցել է իրեն: Մինչև բարձրացրել է գլուխը, տեսել է իրեն շատ մոտ գտնվող տղամարդու, ով դանակով երկու անգամ հարվածել է իրեն, նախ՝ ձախ ձեռքի բազկային շրջանին, իսկ հետո՝ որովայնին: Ինքը ցավից գոռացել է, փորձել է փախչել, իսկ այդ տղան սկսել է դանակով մոտենալ այլ անձանց: Ինքը տեղյակ չի եղել, թե այդ տղան ինչու է իրեն դանակահարել և վերջինիս տեսել է առաջին անգամ: Ռոզա Սարգսյանը նկարագրել է այն անձին, ով դանակահարել է իրեն և հայտարարել է, որ տեսնելու դեպքում անպայման կճանաչի:

09.10.2018թ. ճանաչում կատարելու մասին քննչական գործողության ժամանակ Ռոզա Սարգսյանը մատնացույց է արել Արարատ Ղուկասյանին և հայտարարել է, որ վերջինս է իրեն դանակահարել:

Նախաքննության ընթացքում Արարատ Ղուկասյանի մայրը՝ Սոնիկ Պետրոսի Կարապետյանը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին է ներկայացրել դիմում այն մասին, որ իր որդին՝ Արարատ Ղուկասյանը, տառապում է խրոնիկական զառանցանք խանգարում հոգեկան հիվանդությամբ՝ դիմումին կից ներկայացնելով Ավան ՀԱԿ ՓԲԸ-ում Արարատ Ղուկասյանի անվամբ ամբուլատոր հիվանդի բժշկական քարտից քաղվածքի պատճեն:

Վերոգրյալի կապակցությամբ նույնաբովանդակ հայտարարություն է արել նաև Արարատ Էդիկի Ղուկասյանը:

2018թ. հոկտեմբերի 10-ին Արարատ Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

Նկատի ունենալով մեղադրյալ Արարատ Էդիկի Ղուկասյանի վերաբերյալ նախաքննության ընթացքում ստացված տեղեկատվություն առ այն, որ վերջինս տառապում է խրոնիկական զառանցանք խանգարում հոգեկան հիվանդությամբ, ուստի անհրաժեշտություն է առաջացել պարզել մեղադրյալ Արարատ Ղուկասյանի հոգեկան առողջության վիճակը և գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր, որի համար անհրաժեշտ են դատական հոգեբանության և հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 85-րդ, 243-244-րդ, 246-րդ, 248-րդ և 250-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 17115018 քրեական գործով նշանակել դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր ստացիոնար փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար հոգեբուժական բաժանմունքի փորձագետներին:
2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը՝

- Ինչպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ ունի Արարատ Ղուկասյանը:
- Արարատ Ղուկասյանին բնորոշ են այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնք կարող էին էապես ազդել հետազոտվող իրավիճակում նրա վարքի վրա:
- Հաշվի առնելով Արարատ Ղուկասյանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ և անձնային զարգացման մակարդակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը՝ կարող էր արդյոք նա հասկանալ իր կողմից կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը:
- Որոնք են Արարատ Ղուկասյանի իմացական գործընթացների անհատական առանձնահատկությունները և նա կարող էր արդյոք ճիշտ ցուցմունքներ տալ:
- Արարատ Ղուկասյանի հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- Քննարկվող առերևույթ հանցանքը կատարելու պահին Արարատ Ղուկասյանը հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, արարքը կատարելու պահին վերջինս եղել է մեղսունակ, թե ոչ:
- Ներկայումս Արարատ Ղուկասյանը հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկում նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, վերջինս մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
- Արարատ Ղուկասյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:
- Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն, կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասությունների մեջ և որոնց պարզաբանումը կարող է էական նշանակություն ունենալ:

3. Փորձագետներին տրամադրել սույն որոշման օրինակը, իսկ Արարատ Ղուկասյանը և քրեական գործի նյութերը կտրամադրվեն ըստ պահանջի:

4. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները: Միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ, 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված քրեական գործի կամ այլ նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ **Գ.Խ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**